ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 հունիսի 2023 թվականի թիվ 52-Ա

ք. Երևան

«:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի մայիսի 16-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 20 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (այսուհետ՝ Հեռարձակող) գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է Հեռարձակողի «:Բուն Թիվի» տեսալսողական ծրագրի կողմից **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի** դրույթի պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2023 թվականի մայիսի 16-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2023 թվականի մայիսի 16-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ Հեռարձակողի «Բուն Թիվի» տեսալսողական ծրագրի 2023 թվականի մայիսի 13-ի եթերում հեռարձակված «Խոշոր պլան» տեսալսողական հաղորդումը պարունակում է ծխելու տեսարաններ, մասնավորապես՝ ժամը 21:51-ին, 21:52-ին և 22:03-ին, որը սակայն հաղորդման մեկնարկին չի ուղեկցվել «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Հանձնաժողովը 2023 թվականի մայիսի 16-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2023 թվականի մայիսի 23-ին Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանման մեջ հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ արձանագրված՝ 2023թ. մայիսի 23-ի «Խոշոր պլան» հաղորդումը 21:51-ին, 21:52-ին 22:03-ին պարունակում է «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ չուղեկցվող ծխելու տեսարաններ, բայց սույն դեպքում առկա չէ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասով սահմանված խախտում:

Բանն այն է, որ նշված հաղորդման մեջ սույն գործով վիճելի ծխելու տեսարանն իր բովանդակության մեջ ըստ էության քննադատություն է ծխելու դեմ և այդ տեսարանն իր բովանդակությամբ ինքնին ծխելու վնասակարության մասին է, և դրանում էության մեջ հաղորդվում է ծխելու վնասակարության վերաբերյալ տեղեկատվություն (տե՛ս հաղորդման 15:48-15:59 րոպեները): Սա նշանակում է, որ չնայած նշված տեսարանը չի ուղեկցվել օրենքով պահանջվող «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ, բայց այդ տեսարանի ցուցադրությունն առանց այդպիսի գրառման չի խախտում օրենքի պահանջը, քանի որ տեսարանն արդեն իսկ ուղեկցվում է ծխելու վնասակարության մասին տեսաձայնային բովանդակությամբ:

Մասնավորապես, այդ տեսարանում հնչեցվում է հետևյալը. «Սարսափեցրեց այն գաղափարը, որ մեկ ծխախոտը մարդու կյանքից խլում է վեց վարկյան: Նա չզլացավ ու փորձեց հաշվել կյանքի ընթացքում ծխած բոլոր սիգարետները և ապշահար եղավ, թե ինչ հրաշքով է մինչև հիմա ապրում»:

Ահա այս բովանդակությամբ տեքստի առկայությունը ծխելու տեսարան պարունակող հաղորդման մեջ ավելին է, քան «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ դրա ուղեկցումը, և այդպիսի բովանդակությամբ տեքստի հեռարձակումը ծխելու տեսարան պարունակող հաղորդման մեջ , կարծում ենք, բավարար է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը պահպանված համարելու համար:

Նշված դիքորոշումը հիմնավորվում է նաև հետևյալ իրավական փաստարկներով:

Այսպես, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի» համաձայն՝

8.Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

6.Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսապատկերումը կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):

Ընդ որում, նույն օրենքի նախաբանի համաձայն՝ սույն օրենքի նպատակներն են՝ ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակն

երի փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներգործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը:

Պարզ ասած՝ նշված օրենքի նպատակը ծխելու դեմ պայքարն է: Ահա այս նպատակից ելնելով է, որ օրենքի վերևում մեջբերված 7-րդ հոդվածի 6-րդ մասով պահանջվում է ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում հաղորդել ծխախոտային արտադրատեսակների ... օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվություն (ձայնային կամ պատկերի միջոցով), եթե ստեղծագործությունը պարունակում է ծխախոտային արտադրատեսակների տեսապատկերում:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ ուղեկցման պահանջն էլ, ըստ էության, բխում է օրենքի վերը նշված նպատակից: Այլ կերպ ասած՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի իմաստը ծխելու դեմ պայքարելու նպատակով դրա վնասակարության մասին պարտադիր հիշատակումն է ծխելու տեսարան պարունակող հաղորդումից առաջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Սույն գործով արձանագրված ծխելու վնասակարության մասին տեղեկատվություն բովանդակող հաղորդման մեկնարկին «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ այն ուղեկցելը, կարծում ենք, ձևական պահանջ է, և այդ պահանջը չպահպանելը չի կարող հանգեցնել որևէ իրավական հետևանքի, քանի որ բովանդակային առումով «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ այդ հաղորդման ուղեկցման պարտականությունը հեռարձակողի կողմից արդեն իսկ կատարված է:

Այնուամենայնիվ, եթե Հանձնաժողովի դիտարկմամբ՝ ծխելու տեսարան պարունակող հաղորդման մեկնարկին «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ դրա ուղեկցումը պարտադիր է բոլոր դեպքերում՝ անկախ այդ հաղորդման մեջ ծխելու վնասակարության մասին տեղեկատվության տեսապատկերումից, հայտնում ենք, որ մեր կողմից ձեռնարկվել են պատշաճ միջոցներ այդպիսի խախտումները կանխելու ուղղությամբ, և քննարկվող գրառումը տեսանելի չափով, հինգ վարկյան տևողությամբ ուղեկցվում է համապատասխան հաղորդումների մեկնարկին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:»:

Հեռարձակողը, իր պարզաբանման մեջ խնդրում է Հանձնաժողովին կարճել «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ նկատմամբ 2023 թվականի մայիսի 16-ին հարուցված վարչական վարույթը:

<u>Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.</u>

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է՝ *«*Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:***»:**

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսապատկերումը կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով)»:

Փաստում ենք, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական

մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված հետևյալ սահմանափակումը՝ **ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ***:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 3-րդ գլխի դրույթներով տեսալսողական մեդիածառայություն մատուցողների տեսալսողական հաղորդումների կազմակերպման համար սահմանվել են ընդհանուր պահանջներ, մասնավորապես՝ Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդում հեռարձակելիս՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը, սակայն Հեռարձակողի կողմից 2023 թվականի մայիսի 13-ին հեռարձակվել է «Խոշոր պլան» տեսալսողական հաղորդումը, որտեղ կան ծխելու տեսարաններ պարունակող դրվագներ և այդ տեսալսողական հաղորդման մեկնարկին բացակայել է նշված գրառումը՝ չպահպանելով Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերվում է Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումն այն մասին, որ նշված տեսալսողական հաղորդման մեջ ծխելու տեսարանն իր բովանդակության մեջ ըստ էության քննադատություն է ծխելու դեմ և այդ տեսարանն իր բովանդակությամբ ինքնին ծխելու վնասակարության մասին է, այսինքն այն պարունակում է ծխելու վնասակարության վերաբերյալ տեսաձայնային տեղեկատվություն, ուստի Օրենքով պահանջվող «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայությունը չի խախտում Օրենքի պահանջը, ապա Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքը չի տարանջատում, թե որ դեպքում պետք է տեսալսողական հաղորդումը ուղեկցվի **«Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ, իսկ որ դեպքում՝ ոչ:** Ավելին, նշված նորմը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ, այսինքն, Հեռարձակողի կողմից ենթակա է պարտադիր կատարման և Օրենքը պահանջում է Հեռարձակողներից, որ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման ***մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ*** նշվի **«Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը:**

Այսպիսով, Հեռարձակողի կողմից տեսալսողական հաղորդումների պետք է կազմակերպվեն Օրենքի դրույթներին համապատասխան և Հեռարձակողի պարզաբանումը բավարար հիմք չի կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար:

Հանձնաժողովը խախտումն արձանագրելիս կարևորում է նաև այն, որ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման հեռարձակումն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ կոնկրետ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես ներառում է իր մեջ հանրության առողջության ու շրջակա միջավայրի պահպանումը: Այս դեպքում պետք է փաստել նաև, որ ծխախոտի դեմ պայքարը հանրային առողջության

պահպանման համար է կատարվում և Հեռարձակողի հանրային առողջության պահպանմանն ուղղված Օրենքի վերոնշյալ դրույթի պահանջը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը և պարզաբանումը, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ և արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) *գրավոր նախազգուշացում,*
2) *տուգանք,*
3) *հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության կասեցում,*
4) *հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:*

Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ 4-Ա որոշմամբ վարչական տույժ է կիրառվել «:Բուն» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ նատմամբ՝ նույն խախտման հիմքով և Հեռարձակողի նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողը մեկ տարվա ընթացքում կրկնել է նույն խախտումը՝ ցուցադրելով ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումներ, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասի հատկանիշներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով,42-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 57-րդ հոդվածի 24-րդ մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով կիրառված տույժի եռապատիկի չափով՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «:ԲՈՒՆ» ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ պատշաճ ձևով, հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

02 հունիսի 2023թ.
ք. Երևան